

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2022-2023 ուստարի
/ տևողությունը – 90 րոպե/
9 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայկական լեռնաշխարհի նշված լեռներից որի՞ գագաթին է արևի ճառագայթման ինտենսիվությունը ավելի բարձր միևնույն օրվա կեսօրին, եթե ամպամածությունը բացակայում է
1. Սուկավետ 2. Թոնդրակ 3. Ջիլո 4. Քաջքար
2. Նշված գետերից որի՞ հոսքն է առավել կարգավորված ջրամբարներով
1. Փամբակ 2. Որոտան 3. Աղստև 4. Դեբեդ
3. Նշվածներից ո՞րը գլխավորապես գունավոր մետաղների հանքավայր չէ
1. Քաջարան 2. Սոթք 3. Թեղուտ 4. Սվարանց
4. Տվյալ պնդումներից ո՞րն է ճիշտ
1. ՀՀ բնակչության ամենամեծ խտությունը Արարատի մարզում է
2. Աշխատանքային ռեսուրսները կազմում են ՀՀ բնակչության 46%
3. ՀՀ բնակչությանը ներկայումս բնորոշ է վերարտադրության ընդլայնված ռեժիմը
4. ՀՀ տարածքում թվով ամենաշատ քաղաքները Լոռու մարզում են
5. Փոխակերպման արդյունքում կրաքարից առաջանում է՝
1. գնեյս 2. ալմաստ 3. մարմար 4. քվարց
6. Երկու կողմից խզվածք ունեցող երկրակեղևի իջած տեղամասը կոչվում է՝
1. հորստ 2. գրաբեն 3. կրկես 4. մորեն
7. Քարտեզի վրա հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է՝
1. իզոթերմ 2. իզոբար 3. իզոբար 4. իզոհիպս
8. Նշված քաղաքներից որո՞ւմ է երկրաշարժի հավանականությունը ամենափոքրը
1. Կանբերա 2. Լոս Անջելես 3. Դուշանբե 4. Կատմանդու
9. Նշված բնական գոնաներից ո՞րն է ամենամեծ մակերեսը զբաղեցնում Աֆրիկայում
1. Հասարակածային խոնավ մշտադալար անտառների
2. մերձարևադարձային մշտադալար կոշտատերև անտառների
3. սավաննաների և նոսրանտառների
4. անապատների և կիսաանապատների
10. Պաշտոնապես երկլեզու պետություն է՝
1. Շվեյցարիա 2. Կանադա 3. Ճապոնիա 4. Գերմանիա
11. Հարավ-արևելյան Ասիայում ներգամաքային դիրք ունի՝
1. Թաիլանդը 2. Լաոսը 3. Վիետնամը 4. Բրունեյը
12. Պնդումներից ո՞րն է ճիշտ՝
1. Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում մեծանում է ատոմային էներգետիկայի կշիռը
2. Մակընթացային էլեկտրակայանների տեղաբաշխման հիմնական գոտին համընկնում է բարեխառն լայնությունների հետ
3. Այլընտրանքային էներգետիկայի ամենաշահավետ տեսակը ջերմային էներգետիկան է
4. Ջրաէլեկտրակայանները բնապահպանական տեսանկյունից բացարձակ անվնաս են



13. Բնեռագնացը հարավային բևեռից 5000կմ շարժվեց հյուսիս, ապա՝ 7200կմ շարժվեց արևելք, այնուհետև՝ 5000կմ շարժվեց հյուսիս և թեքվեց արևմուտք՝ անցնելով 300կմ: Դրանից հետո նա 10000կմ շարժվեց հյուսիս: Ո՞ր աշխարհագրական լայնությանը հասավ բնեռագնացը:

1. Հարավային լայնության 23,5°
2. Հյուսիսային լայնության 23,5°
3. Հյուսիսային լայնության 66,5°
4. Հյուսիսային լայնության 90°

14. Ճանապարհորդը հունիսի 22-ի կեսօրին նկատեց, որ իր ստվերն անհետացավ, սակայն մեկ ժամ անց այն նորից հայտնվեց: Աշխարհագրական ո՞ր լայնության վրա էր գտնվում ճանապարհորդը:

1. Հարավային լայնության 90°
2. Հարավային լայնության 23,5°
3. Հյուսիսային լայնության 90°
4. Հյուսիսային լայնության 23,5°

15. Նշված պատկերներից ո՞րն է համապատասխանում հորիզոնականներով պատկերված օբյեկտին



1. Ա
2. Բ
3. Գ
4. Դ

Վարճ պատասխանով առաջադրանքներ

16. Ա երկրի ծնելիության գործակիցը տվյալ տարվա ընթացքում 15‰ էր, իսկ մահացության գործակիցը՝ 7‰: Այդ նույն տարվա ընթացքում Ա երկիր ներգաղթեց 25000մարդ և արտագաղթեց 5000մարդ: Արդյունքում քանի՞ տոկոսով ավելացավ Ա երկրի բնակչության թիվը տվյալ տարվա ընթացքում, եթե մինչ ավելացումը այն 10մլն մարդ էր:

17. Հաշվել գետի օրական հոսքը խորանարդ կիլոմետրերով, եթե գետի լայնությունը տվյալ հատվածում 1կմ է, միջին խորությունը՝ 10մ, իսկ հոսքի արագությունը 0.5մ/վրկ:

18. Լեռան ստորոտին ջերմաստիճանը +18°C է, իսկ գագաթին՝ +8°C: Տվյալ լեռան հատվածում ջերմաստիճանի փոփոխության սանդղակը 5°C/1000մ է: Որքա՞ն է մթնոլորտային ճնշումը լեռան ստորոտին, եթե գագաթին այն 550մմ ս.ս. է:

19. Որքա՞ն է օդի բացարձակ խոնավությունը, եթե հարաբերական խոնավությունը 50% է, իսկ օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20գ/մ³ ջուր:

20. Քանի՞ անգամ է Ա երկրի բնակչության խտությունը գերազանցում Բ երկրի բնակչության խտությանը, եթե Ա երկրի բնակչության թիվը Բ երկրի բնակչության թվից 2 անգամ ավելի է, իսկ տարածքը՝ 3 անգամ փոքր:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Վարդան Ասատրյան